ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 23.05.2018թ. թիվ 31-272 գրության հիման վրա, 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.05.2018թ. թիվ 06-05/18 գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ հարկային նոր օրենսգիրք:

Համաձայն օրենսգրքի 3-րդ հոդվածի ՀՀ-ում գործում է միասնական հարկային համակարգ՝ որոշակի սկզբունքների վրա հիմնված, մասնավորապես, վերը նշված հոդվածի առաջին կետի, առաջին ենթակետով սահմանված է, որ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը հարկ վճարողների և հարկային մարմինների համար պետք է լինեն պարզ, հստակ և իրենց մեջ չպարունակեն հակասություններ և անորոշություններ:

Ինչպես նաև, հարկային օրենսգրքի 78-րդ և 99-րդ հոդվածներով ամրագրված ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված համապատասխան ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը նշել է, որ ՀՀ Հարկային օրենսգրքի 319-րդ հոդվածի առաջին մասով սահմանված է, որ հարկային հաշվարկով առաջացած հարկային պարտավորությունները և դեբետային գումարները հարկային մարմնում հաշվառվում են հարկային հաշվարկի ներկայացման ամսաթվով, ինչպես նաև օրենսգրքի 325 հոդվաշի 5-րդ և 6-րդ մասերով սահմանվում է միասնական հաշվում առկա գումարների հաշվին հարկային պարտավորությունների մարման առաջնահերթությունը, մասնավորապես, նույն հոդվածի 6-րդ մասում նշվում է, որ հարկ վճարողի հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության:

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն սույն թվականի ապրիլի 8-ին, 15-ին և 28-ին <u>taxservice.am</u> էլեկտրոնային համակարգի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել համապատասխան 2

241 873 (երկու միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր յոթանասուներեք), 12 854 208 (տասներկու միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր ութ) , 25 219 066 (քսանհինգ միլիոն երկու հարյուր տասնինը հազար վաթսունվեց) դրամ կազմող ներմուծման հարկային հայտարարագրեր, ինչի արդյունքում, ըստ առաջնահերթության գոյացել է հարկային պարտավորություններ: Մինչդեռ, սույն թվականի ապրիլի 16-ին «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել 2017 թվականի համար ռեզիդենտների շահութահարկի հաշվարկ, որում շահութահարկի գումարը կազմել է 13 674 670 (տասներեք միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ: Համաձայն շահութահարկի մասին օրենքի, նշված շահութահարկի գումարի և կատարված կանխավճարների դրական տարբերությունը բյուջե պետք է վճարվի հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը, առաջացած դրական տարբերությունը ընկերությունը նշված ժամկետում վճարել է բյուջե:

Արդյունքում, օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հարկային պարտավորությունները մարվել են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության, սակայն համաձայն օրենսգրքի 78-րդ և 99-րդ հոդվածների Ընկերությունը իրավունք ուներ ԵՏՄ անդամ պետություններից ապրիլ ամսվա ընթացքում ներմուծված ապրանքների մասով 40 315 147 (քառասուն միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար մեկ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամի հարկային պարտավորությունը վճարել մինչև սույն թվականի մայիսի 20-ը ներառյալ, բայց, քանի որ միասնական հաշվով առաջնահերթության սկզբունքով մարվել է (ավտոմատ) ավելի վաղ առաջացած հարկային պարտավորությունները, հետևաբար 26.04.2018թ. դրությամբ առաջացել է 9 511 358 (ինը միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամի ապառք, որը Ընկերությունը մարել է սույն թվականի մայիսի 20-ին ըստ սահմանված կարգի:

Ինչպես նաև, շատ կարևոր հանգամանք է առ այն, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ապահովող taxservice.am էլեկտրոնային կայքի՝ էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորությունների քարտի վարման ընթացակարգը հասու չեր Ընկերության կողմից դիտման, որի մասին Ընկերությունը բազմիցս ահազանգել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ծառայություններին (թեժ գիծ և այլոք):

Ընկերություն նշել է նաև, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հանդիսանում է պարտաճանաչ հարկատու և ժամանակին վճարում է օրենքով սահմանված հարկերը և վճարները: Մասնավորապես, ապրիլ ամսվա համար Ընկերությունը ունեցել է ընդհանուր առմամբ 70 103 739 (յոթանասուն միլիոն մեկ հարյուր երեք հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամի չափով հարկային և մաքսային պարտավորություններ, որից ԵՏՄ ներմուծման հայտարարագրերով՝ 40 337 417 (քառասուն միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, մաքսային հայտարարագրերով՝ 20 960 733 (քսան միլիոն ինը հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ և որպես հարկային այլ պարտավորություններ՝ 8 805 589 (ութ միլիոն ութ հարյուր հինգ հազար հինգ հարյուր ութսունինը) ՀՀ դրամ, որոնք վճարվել են ըստ օրենքի համապատասխան հարկատեսակով սահմանված ժամկետներում:

Ընկերությունը համաձայն չէ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու, և պետության կողմից վերահսկվող գնումների գործընթացին մասնակցության զրկելուց, քանի որ Ընկերությունը չէր կարող խախտել օրենքի գլխավոր նախապայմանը, այն է. գնումներին չպետք է մասնակցեն և համապատասխան բյուջեից չպետք է գումար ստանան այն կազմակերպությունները, որոնք ունեն պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ: Ուստի, հաշվի առնելով վերը նշված փաստերը, երբևիցե՛ և որևիցե՛ հարկային պարտավորություններ չունենալու փաստը Ընկերությանը հույս է ներշնչում, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից չի կայացվի ֆորմալ որոշում (ֆորմալ հարկային պարտավորություններ ունենալու պատճառով):

Ընկերությունը կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ հարկային տեսչության կողմից տրամադրված տեղեկանք առ. 13.05.2018թ. ընկերության հարկային պարտավորություն-ների մասին:

«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/64 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2018թ. թիվ 31-272 գրությամբ հայտնել է, որ «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հույս - Մոտոր» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի համաձայն, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությունը ստացվել է Կարգով սահմանված ժամկետից ուշ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որի հիման վրա վերոհիշյալ մասնակիցների հայտերը մերժվել են:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/64 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար

կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.04.2018թ. հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 9 396 629 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2-րդ համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2018թ. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 23.05.2018թ. թիվ 31-272 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի 29.05.2018թ. թիվ 06-05/18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.04.2018թ. հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2018թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 03.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 9 396 629 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2-րդ համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2018թ. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ինչպես նաև մի շարք այլ մասնակիցների վերաբերյալ 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/9969-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե մասնակիցների մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է վերջիններիս գործողությունների և վարքագծի հետևանքով և առկա է արդյոք վերջիններիս մեղքը, թե ստեղծված իրավիճակը պայմանավորված է հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք,

որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 9 396 629 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն ածանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9297-18 գրությամբ «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00430814) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ